



**<<ՏՈՆՏՈՆ>> ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՍՊԸ ՄԻՋԱՆԿՅԱԼ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՁԵՎ 5)
2018թ.
IV-րդ եռամսյակ**

1. «Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

1) Իրավական դաշտ.

<<ՏՈՆՏՈՆ>> Ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) հիմնադրվել է 1999թ. ապրիլի 27-ին ՀՀ օրենսդրությանը համաձայն, որպես շահույթ ստանալու նպատակով հիմնադրված, առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է բաժնեմասերի Կանոնադրությամբ սահմանված չափերով:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունիսի 27-ի թիվ 124 ԾՕՀ Ա որոշման, Ընկերության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ) 27.06.2008թ.-ին գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում՝ գրանցման վկայական թիվ 7:

Համաձայն Ընկերության կանոնադրության Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 412 միլիոն ՀՀ դրամ դրամ, որը բաժանված է 412 հազար բաժնեմասերի: Մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1000 ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշղված են, լրիվ վճարված և պատկանում են ընկերության մասնակիցներին:

<<ՏՈՆՏՈՆ>> Ինվեստիցիոն Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը 31 դեկտեմբերի 2018թ. դրությամբ ունի 2 մասնակից:

<<ՏՈՆՏՈՆ>> ՍՊԸ-ի նշանակալից մասնակիցներն են՝

1. Վահագն Առաքելյանը- 70% մասնակցությամբ
2. Գոռ Առաքելյանը – 30% մասնակցությամբ

Ընկերության ֆիրմային անվանումն է <<ՏՈՆՏՈՆ>> Ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, կրճատ՝ <<ՏՈՆՏՈՆ>> ՍՊԸ:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնցի 10:

Ընկերությունը ներկայացուցչություններ և մասնաճյուղեր չունի, և որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

Ֆինանսական հաշվետվությունները վերաբերվում են միայն Ընկերությանը:

Ընկերությունը 2017թ.-ի Ֆինանսական գործունեության տարեկան աուդիտը իրականացրել է «ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ» Աուդիտորական խորհրդատվական ընկերության կողմից:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն ՍՊԸ աշխատողների թվաքանակը կազմում է 10 մարդ:

Ընկերության գործառնությունների հիմնական տեսակներն են.

1. ներդրումային գործունեություն
2. պահառության գործունեություն
3. արժեթղթերի շուկայում խորհրդատվական և ինվեստիցիոն բրոքերային գործունեություններ
4. արտարժույթի առք ու վաճառք
5. ֆինանսական խորհրդատվություն

Ընկերությունը իրականացնում է՝ ներդրումներ ՀՀ պետական պարտատոմսերում, հաճախորդների արժեթղթերի պահառություն և արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման ու փոխանցման գործունեություն, արտարժույթի առք ու վաճառք, բրոքերային գործառնություններ արժեթղթերով:

Ընկերության գործարար միջավայրն է՝

- ա) ՀՀ Կենտրոնական բանկը
- բ) ՀՀ բանկերը
- գ) Հայաստանի Ֆոնդային Բորսան,
- դ) Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիան,
- ե) ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձինք:

2. Կորպորատիվ կառավարում.

<<ՏՈՆՏՈՆ>> ՍՊԸ-ի կորպորատիվ կառավարումը ներառում է Ընկերության գործունեության ընդհանուր կառավարումը և իրականացվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության գործադիր մարմնի միջոցով: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան վեց ամիս անց:

<<ՏՈՆՏՈՆ>> ՍՊԸ-ի գործադիր մարմին պարտականությունները կատարում է տնօրենը: Ընկերության գործադիր մարմնի աշխատանքը գնահատվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից և դրա հիմնական սկզբունքները հիմնված են Հայաստանում գործող օրենսդրության, Ընկերության որդեգրած ռազմավարության, կանոնադրության և ներքին կանոնակարգերի վրա:

Մասնակիցների ընդհանուր ժողովը վերահսկում և գնահատում է գործադիր մարմնի աշխատանքը, ներքին աուդիտի և վերահսկողության ծառայության կողմից ստացվող զեկույցների և հաշվետվությունների, ինչպես նաև արտաքին աուդիտի եզրակացության հիման վրա:

Գործադիր մարմնի աշխատանքը ներառում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը, ռիսկերի կառավարման նպատակով որոշումների ընդունում, ընթացիկ և ֆինանսական գործունեության արդյունավետության հսկումը, ներքին աուդիտի, հաշվապահության և այլ բաժինների վերահսկողություն և աշխատակազմի ղեկավարում:

Ղեկավարների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը հանդիսանում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարց:

Ընկերության մասնակիցներին է վերապահված ղեկավարի աշխատանքի գնահատման գործառույթը:

Ղեկավարների կատարած աշխատանքների գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով Ընկերության հեռանկարային զարգացման ծրագրով և տարեկան բյուջեի շրջանակներում պլանավորված առանձին ցուցանիշների, այդ թվում՝ ակտիվների մեծության, զուտ շահույթի մեծության, Ընկերության կապիտալի և ակտիվների շահութաբերության մակարդակների կատարողականը:

Ընկերության ղեկավարների գնահատման նպատակով դիտարկվում է նաև՝

1. Ընկերությունում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման արդյունքները,

2. հաստատված ներքին իրավական ակտերի և այլ որոշումների պատշաճ կատարումը,
3. ռիսկերի կառավարման քաղաքականության իրագործումը,
4. վարվող կադրային քաղաքականության իրագործումը,
5. Ընկերության գործունեության արդյունավետ կառավարումը և հեռանկարային զարգացմանը միտված ծրագրերը:

«Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդի Որոշումով հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերությունների հաշվային պլանի կիրառման հրահանգին և ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն ՍՊԸ-ի 2018թ. հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմված են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան: Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել և ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ Օրենքին, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին համապատասխան:

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, սահմանվում է հաշվապահական հաշվառման վարման քաղաքականությունը, որպես հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և արարողակարգերի ամբողջություն:

- Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

- Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այնպիսի հոդվածների ներառումն է, որոնք համապատասխանում են տարրերի սահմանմանը և բավարարում են հետևյալ չափանիշներին՝

- ա) հավանական է, որ հոդվածի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կներհոսեն կազմակերպություն կամ կարտահոսեն կազմակերպությունից,

- բ) հոդվածն ունի արժեք, որը կարող է արժանահավատորեն չափվել:

- Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների չափումը կատարվում է ներքոհիշյալ հիմունքները կիրառելու միջոցով՝

- Ակտիվները գրանցվում են ձեռքբերման պահի դրությամբ դրանց ձեռքբերման համար վճարված (վճարվելիք) դրամական միջոցների գումարի չափով, իսկ այլ ձևով հատուցելու դեպքում՝ հատուցման իրական արժեքի չափով,

- Պարտավորությունները գրանցվում են դրանց դիմաց ստացված ակտիվների (ծառայությունների) գումարի չափով, եթե դրանց դիմաց ակտիվներ (ծառայություններ) չեն ստացվել՝ դրամական միջոցների այն գումարի չափով, որն ակնկալվում է, որ կվճարվի սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունները մարելու համար:

- Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու համար օգտագործել հետևյալ սկզբունքները.

1. Անընդհատությունը՝ կազմակերպությունը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում կամ անհրաժեշտություն չունի լուծարվելու կամ էականորեն կրճատելու իր գործունեությունը.

2. Հետևողականությունը՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մի հաշվետու ժամանակաշրջանից մյուսը չպետք է փոփոխվի, բացառությամբ, եթե էական փոփոխություններ են տեղի ունենում կազմակերպության գործառնությունների բնույթում, կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության միջոցով տրվում է առավել էական տեղեկատվություն:

3. Հաշվեգրումը՝ տնտեսական գործառնությունների և դեպքերի արդյունքները ճանաչվում և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել՝ անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետներից, և արտացոլվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են:

4. Էականությունը՝ տեղեկատվությունը համարվում է էական, եթե նրա չբացահայտումն ազդում է ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

5. Միասնականությունը՝ հաշվապահական հաշվառման բնույթով և գործառույթներով նման հաշիվները ֆինանսական հաշվետվությունների մեջ պետք է միավորվեն, եթե դրանց առանձին ներկայացումը չի պարունակում էական տեղեկատվություն:

6. Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքով և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով սահմանված այլ սկզբունքներով:

<<ՏՈՆՏՈՆ>> ինվեստիցիոն ՍՊԸ-ի կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունները բավարարում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և ՀՀ <<Հաշվապահական հաշվառման մասին>> Օրենքի պահանջներին:

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը պարունակում է բավարար չափով ինֆորմացիա, որպեսզի.

ա) լինի տեղին՝ օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար,

բ) լինի արժանահավատ այն առումով, որ այն.

1. ճշմարիտ ներկայացնի կազմակերպության գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը,

2. արտացոլի ոչ միայն իրավական ձևը, այլև իրադարձությունների տնտեսական բովանդակությանը,

3. չեզոք է, այսինքն զերծ է կանխակալությունից,

4. հաշվենկատ է, և

5. ամբողջական է բոլոր էական դրսևորումներում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն տեղի չի ունեցել, էական սխալներ չեն բացահայտվել, հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված չափման հիմունքներն են՝

1. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

ա) Կազմակերպության տնօրինության տակ գտնվող հիմնական միջոցների սեփականության իրավունքը պատկանում է <<ՏՈՆՏՈՆ>> ՍՊԸ-ին,

բ) Կազմակերպությունը հիմնական միջոցների ձեռք բերման գծով պայմանագրային պարտավորություններ չունի: 2018 թվականի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հիմնական միջոցները չեն վերագնահատվել:

գ) Հիմնական միջոցների ինչպես նաև ոչ նյութական ակտիվների հետագա չափման մոտեցումն այն է, որ ճանաչվում է սկզբնական արժեք (ինքնարժեքի) մոդելով:

2. Պաշարներ

Պաշարների ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 229.594 ՀՀ դրամ:

Պաշարների ինքնարժեքի որոշման բանաձևն է՝ ԱՄԱԵ (ՖԻՖՈ)

3. Ընթացիկ ներդրումներ

Ընթացիկ ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով: Ներդրումների շուկայական արժեքն անհնար է բացահայտել պետական արժեթղթերի կարգավորվող շուկայի բացակայության պատճառով:

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչվում և հետագայում չափվում են իրական արժեքով՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 39-ի

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ներդրումները հաշվառվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով ամորտիզացված արժեքով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից շահույթների (վնասների) ճանաչման մոտեցումն այն է, որ արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություններում, որպես եկամուտ կամ ծախս:

4. Սեփական կապիտալ

ա) Կանոնադրական կապիտալ

1. թողարկված և լրիվ վճարված բաժնեմասեր-412'000 հատ
2. մեկ բաժնեմասի անվանական արժեքը- 1000 ՀՀ դրամ
3. բաժնեմասերի ընդհանուր անվանական արժեքը-412'000'000 ՀՀ դրամ
4. Ընկերության կանոնադրական կապիտալ-412'000'000 ՀՀ դրամ

բ) Սեփական կապիտալում պահուստների մասը ընդգրկում է միայն պահուստային կապիտալը:

5. Արտահաշվեկշռում ներառված են ֆիզիկական անձ հաճախորդների հետ կնքված բրոքերային պայմանագրերի համաձայն ստացված միջոցները, դրանց գծով պարտավորությունները և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքերը ինչպես նաև ածանցյալ գործիքները:

6. Փոխարժեքային տարբերություններից եկամուտները և ծախսերն ընդգրկում են հարկային նպատակով եկամուտ և ծախս չհամարվող արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների դրական և բացասական արդյունքը:

Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումն է՝ ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս դրանց առաջացման ժամանակաշրջանում

7. Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումն է՝ ճանաչվում է որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում

2. «Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Տոկոսային և նմանատիպ եկամուտներ</u>		
1)	Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից		220
2)	Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	219491	306263
3)	Տոկոսային եկամուտներ փոխառություններից		
4)	Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից		
5)	Տոկոսային եկամուտներ սվոպից		
6)	Այլ տոկոսային եկամուտներ	340	410
7)	Ընդամենը	219831	307093
2.	<u>Տոկոսային և նմանատիպ ծախսեր</u>		
1)	Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(13112)	(15054)
2)	Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(74209)	(103092)
3)	Տոկոսային ծախսեր սվոպի գծով		

4)	Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց		
5)	Այլ տոկոսային ծախսեր		
6)	Ընդամենը	(87321)	(118146)
3.	<u>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</u>	132510	188947

3. «Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</u>		
1)	Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից		
2)	Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից		
3)	Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից		
4)	Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից		
5)	Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից		
6)	Պահառության գործունեությունից		
7)	Այլ միջնորդավճարներ		
8)	Ընդամենը		
2.	<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</u>		
1)	Միջնորդավճարների գծով ծախսեր	(2882)	(135)
2)	Ստացված զուտ կոմիսիոն և այլ	(2882)	(135)

	վճարներ		
--	----------------	--	--

4. «Ծանոթագրություն 5. Եկամուտ շահութաբաժիններից»

	Շահութաբաժիններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ		
2.	Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահութաբաժիններ	35	
3.	Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ		
4.	Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահութաբաժիններ		

5. «Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ</u>		
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ	68	
2)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(10472)	74464
3)	Ընդամենը	(10404)	74464
2.	<u>Վաճառքի համար մատչելի</u>		

	<u>ներդրումներից զուտ եկամուտներ</u>		
1)	Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
2)	Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
3.	<u>Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ եկամուտներ</u>		
	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ		46450
3)	Ընդամենը		46450
3.	<u>Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտներ</u>		
1)	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	(199)	(19)
2)	Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(5542)	37813
3)	Ընդամենը	(5741)	37794
4.	Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	(16145)	158708

6. «Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ»

	<u>Այլ գործառնական եկամուտ</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ		

	Եկամուտներ		
2.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ		
3.	Այլ եկամուտներ	2887	
4.	Ընդամենը	2887	

7. *Եթե աղյուսակի «Այլ եկամուտներ» տողը էականորեն մեծ է, ապա բացահայտվում են եկամտի գոյացման աղբյուրները:

Ծանոթագրություն 8. Ջուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով</u>		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ		
2)	Պահուստին կատարված մասհանումներ		
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		
6)	Պահուստի օգտագործում		
7)	Պահուստի վերջնական մնացորդ		
2.	<u>Հաճախորդների նկատմամբ պահանջների գծով</u>		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ		

2)	Պահուստին կատարված մասհանումներ		
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		
6)	Պահուստի օգտագործում		
7)	Պահուստի վերջնական մնացորդ		
3.	<u>Ներդրումների գծով</u>		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ		
2)	Պահուստին կատարված մասհանումներ		
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		
6)	Պահուստի օգտագործում		
7)	Պահուստի վերջնական մնացորդ		
4.	<u>Այլ ակտիվների գծով</u>		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ		
2)	Պահուստին կատարված մասհանումներ		
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		

6)	Պահուստի օգտագործում		
7)	Պահուստի վերջնական մնացորդ		

8. «Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր» ծանոթագրության տարրերն են՝

	<u>Ընդհանուր վարչական ծախսեր</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(59234)	(81170)
2.	Ծախսեր սոցիալական ապահովության վճարների գծով		
3.	Գործուղման և ուսուցման գծով ծախսեր		
4.	Անձնակազմի այլ ծախսեր		
5.	Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(5658)	(4300)
6.	Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(1345)	(129)
7.	Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(2775)	(1239)
8.	Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(1568)	(2238)
9.	Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(698)	(734)
10.	Տրանսպորտային ծախսեր	(667)	(191)
11.	Այլ վարչական ծախսեր	(2923)	(2958)
12.	Ընդամենը	(74868)	(92959)

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ << ՏՈՆՏՈՆ >> ինվեստիցիոն ՍՊԸ աշխատողների թվաքանակը կազմում է 10 մարդ : Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափն է 335.181,00 ՀՀ դրամ :

9. «Ծանոթագրություն 10. Այլ գործառնական ծախսեր» ծանոթագրության տարրերն են՝

	Այլ գործառնական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Հասարակական կապերի գծով ծախսեր	(1386)	(3268)
2.	Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(1451)	(2071)
3.	Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(40)	(60)
4.	Այլ ծախսեր	(3111)	(19562)
5.	Ընդամենը	(5988)	(24960)

10. «Ծանոթագրություն 11. Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)» ծանոթագրության տարրերն են՝

	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից		
2.	Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից		
3.	Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներից		
4.	Այլ դուստր ընկերություններում ներդրումներից		

5.	Ընդամենը		
----	----------	--	--

11. Ծանոթագրություն 12. Շահութահարկի գծով ծախս

	Շահութահարկի գծով ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Ընթացիկ հարկի գծով ծախս	(1163)	(34760)
2.	Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները		
3.	Հետաձգված հարկի գծով ծախս		
4.	Ընդամենը	(1163)	(34760)_

1) գործող օրենսդրության համաձայն կիրառվող շահութահարկի դրույքաչափը, Համաձայն ՀՀ «Հարկային Օրենսգրքի»՝ Շահութահարկի գումարի հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով :

2) շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

		Հաշվետու ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)	Նախորդ ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)
1.	Շահույթը մինչև հարկումը	35549	-	229601	-
2.	Շահութահարկ՝ դրույքաչափով	x	20	X	20
3.	Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-	-
4.	Զհարկվող	264206	(x%)	277938	(x%)

	Եկամուտներ				
5.	Չնվազեցվող ծախսեր	234473	x%	222139	x%
6.	Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	x/(x)	x/(x)	x/(x)	x/(x)
7.	Շահութահարկի գծով ծախս	(1163)		(34760)	

3) Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

		Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ
1.	<i>Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝</i>				
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով				
2)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով				
3)	Հիմնական միջոցների գծով				
4)	Այլ ակտիվների գծով				
5)	Ստեղծված պահուստների գծով				
6)	Այլ պարտավորությունների գծով				
2.	<i>Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝</i>				
1)	Շահույթի կամ վնասի				

	միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով				
2)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով				
3)	Հիմնական միջոցների գծով				
4)	Այլ ակտիվների գծով				
5)	Այլ պարտավորությունների գծով				
3.	<i>Ձույր հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն</i>				

12. Ծանոթագրություն 13. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո		
2.	Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	()	()
3.	Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)		
4.	Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը		

5.	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
6.	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթ		

13. «Ծանոթագրություն 14 Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում» ծանոթագրության տարրերն են.

	<u>Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ Կենտրոնական բանկում</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր	814	326
2.	Կանոնադրական կապիտալի կուտակման հաշիվ Կենտրոնական բանկում		
3.	Դեպոնացված միջոցներ Կենտրոնական բանկում		
4.	Հաշվեգրված տոկոսներ		
5.	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում		

31 դեկտեմբերի 2018թ. դրությամբ, Ընկերության դրամարկղում կանխիկ դրամական միջոցների ընդհանուր գումարը կազմում է 814 հազար ՀՀ դրամ և այն օգտագործման որևէ սահմանափակում չկա:

<< Դրամական հոսքերի մասին հաշվետվության>> մեջ <<Դրամական միջոցների և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում>> տողում ներառված են հետևյալ հոդվածները՝ կանխիկ դրամը դրամարկղում և ՀՀ բանկերում թղթակցային հաշիվները :

14. «Ծանոթագրություն 15. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» ծանոթագրության տարրերն են՝

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Ընթացիկ հաշիվներ</u>		

1)	Հայաստանի Հանրապետության բանկերում	336043	348137
2)	Այլ բանկերում		
3)	Դեպոնացված հաշիվներ բանկերում	179780	85320
4)	Հաշվեգրված տոկոսներ		
5)	Ընդամենը	515823	433457
2.	<u>Տրամադրված փոխառություններ և ավանդներ, այլ պահանջներ</u>		
1)	Կենտրոնական բանկում՝ տրամադրված փոխառություններ և ավանդներ ռեպո (հետգնման) պայմանագրեր այլ		
2)	Բանկերում՝ տրամադրված փոխառություններ և ավանդներ ռեպո (հետգնման) համաձայնագրեր արժեթղթերի փաթեթի կառավարում այլ		
3)	Ներդրումային և այլ ֆինանսական կազմակերպություններում տրամադրված փոխառություններ և ավանդներ ռեպո (հետգնման) համաձայնագրեր արժեթղթերի փաթեթի կառավարում այլ		
4)	Հաշվեգրված տոկոսներ		
5)	Ընդամենը		
3.	Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)	()	()
4.	Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	515823	433457

	<u>դրությամբ հաճախորդներին տրամադրված արժեզրկված փոխառությունների կառուցվածքը</u>	ժամանակաշրջան գումարը/քանակը	ժամանակաշրջան գումարը/քանակը
1.	Տրամադրված փոխառություններ, որից		
2.	արժեզրկված փոխառություններ, այդ թվում՝ ժամկետանց վերանայված (վերաձևակերպված) վերաֆինանսավորված		
3.	Ընդամենը փոխառություններ		
4.	Հաճախորդներին տրամադրված փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)		
5.	Ընդամենը զուտ փոխառություններ		

Վերանայված (վերաձևակերպված) են համարվում այն ակտիվները, որոնց մարման ժամկետները կամ այլ պայմանները վերանայվել (վերաձևակերպվել) են, գումարները փոխանցվել են ակտիվային նոր գործիքներին, կամ էլ պայմանները վերանայվել են այլ կերպ պարտապանի (փոխառուի) համար առավել նպաստավոր ուղղությամբ, ինչը պայմանավորված է նրա վատ ֆինանսական դրությամբ և (կամ) նրա պարտքը մարելու կարողությամբ:

Վերաֆինանսավորված ակտիվներն այն ակտիվներն են, որոնց մարումն իրականացվել է նոր ստանձնած պարտավորությունների աղբյուրների հաշվին:

17. Ծանոթագրություն 16-ում բացահայտվում են փոխառուների թվաքանակը, տրամադրված փոխառությունների վերլուծությունն առնվազն ըստ հաճախորդների հետևյալ տիպերի.

	<u>Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ հաճախորդների</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Բանկեր, այդ թվում՝		

	տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
2.	Այլ ֆինանսական կազմակերպություններ, այդ թվում՝ տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
3.	Պետական կազմակերպություններ, այդ թվում՝ տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
4.	Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ոչ պետական կազմակերպություններ, այդ թվում՝ խոշոր կազմակերպություններ փոքր և միջին կազմակերպություններ*		
5.	Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, այդ թվում՝ փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր		2
6.	Անհատ ձեռնարկատերեր, այդ թվում՝ փոխառություններռեպո (հետգնման) համաձայնագրեր		
7.	Հաշվեգրված տոկոսներ, այդ թվում՝ տրամադրված փոխառությունների գծով ռեպո (հետգնման) համաձայնագրերի գծով այլ ակտիվների գծով		
8.	Ընդամենը պահանջներ		2
9.	Հաճախորդների նկատմամբ պահանջների		

	հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)		
10.	Ընդամենը զուտ պահանջներ		2

18. Ծանոթագրություն 16-ում բացահայտվում են խոշոր հաճախորդների և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված փոխառությունների՝

- 1) ընդհանուր գումարը,
- 2) տեսակարար կշիռը ընդհանուր փոխառությունների մեջ (ընդհանուր փոխառությունների n %-ը),
- 3) տոկոսային հարաբերակցությունը ընդհանուր կապիտալի նկատմամբ (կապիտալի n %-ը):

19. Ծանոթագրություն 16-ում բացահայտվում է հաճախորդների նկատմամբ պահանջների աշխարհագրական վերլուծությունը:

	<u>Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ ռեզիդենտության</u>	Հաշվետու ժամանակա- շրջան	Տոկոսային հարաբերու- թյունը	Նախորդ ժամանակա- շրջան	Տոկոսային հարաբերու- թյունը
1.	Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ			40000	5.98%
2.	ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ				
3.	ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ				
4.	Հաշվեգրված տոկոսներ			0	
5.	Ընդամենը			40000	5.98%

20. Ծանոթագրություն 16-ում «Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ» և «ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ» տողերում նշվում են երկրների անվանումները

21. Ծանոթագրություն 17. «Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ» ծանոթագրության տարրերն են՝

		Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ ժամանակաշրջան	
1.	<u>Պետական արժեթղթեր</u>				
1)	Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ				
2)	ԲԲԲ- /Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ				
3)	ԲԲԲ- /Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ				
4)	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող պետական արժեթղթեր				
2.	<u>Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր</u>	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>
1)					

	<p>Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի</p> <p>երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ</p>				
2)	<p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի</p> <p>երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ</p>				
3)	<p>ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի</p> <p>երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ</p>				
4)	<p>Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր</p>				
3.	<p><u>Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր</u></p>	<i><u>ցուցակված</u></i>	<i><u>չցուցակված</u></i>	<i><u>ցուցակված</u></i>	<i><u>չցուցակված</u></i>
1)	<p>Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի</p> <p>երկարաժամկետ պարտքային գործիքներ</p>				

	կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
2)	ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
3)	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ երկրների ոչ պետական արժեթղթեր				
4)	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր				
4.	<u>Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ</u>				
1)	տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքեր Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող փոխառուների ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող փոխառուների տրամադրված փոխառություններ Այլ				
2)	Ածանցյալ գործիքներ ֆյուչերս ֆորվարդ օպցիոն սվոպ		54310	12049	4778

	այլ		
3)	Ընդամենը	54310	16827
5.	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	54310	16827

Ընկերությունը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերադասակարգումներ չի արել :

22. Ծանոթագրություն 18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» ծանոթագրության տարրերն են՝

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Պետական արժեթղթեր</u>		
1)	Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
2)	ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
3)	ԲԲ+/Բա1/ և ցածր վարկանիշ ունեցող, վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր		

	այլ				
4)	Ընդամենը պետական արժեթղթեր				
2.	Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>
1)	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
2)	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
3)	ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
4)	Ընդամենը Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր				
3.	Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>
1)					

	<p>Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի</p> <p>երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ</p>				
2)	<p>ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի</p> <p>երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ</p>				
3)	<p>Ընդամենը այլ երկրների ոչ պետական արժեթղթեր</p>				
4)	<p>Ընդամենը վաճառքի համար մատչելի արժեթղթեր</p>				
4.	<p>Վաճառքի համար մատչելի այլ ֆինանսական ակտիվներ</p>				
1)	<p>տրամադրված փոխառություններ, ֆակտորինգ, դեբիտորական պարտքեր</p> <p>Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող փոխառուների ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող փոխառուների Այլ</p>				
2)	<p>Ընդամենը</p>				
5.	<p>Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</p>				

23. Ծանոթագրություն 19. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»
ծանոթագրության տարրերն են՝

		Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ ժամանակաշրջան	
1.	Պետական արժեթղթեր				
1)	Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ	1522862		1462473	
2)	ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ				
3)	ԲԲ+/Բա1/ և ցածր վարկանիշ ունեցող, ինչպես նաև վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ				
4)	Հաշվեգրված տոկոսներ	0		0	
5)	Ընդամենը պետական արժեթղթեր	1522862		1462473	
2.	Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>
1)	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի, այդ թվում՝				

	երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ				
2)	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի, այդ թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ		967		2968
3)	ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ				
4)	Հաշվեգրված տոկոսներ		9		36
5)	Ընդամենը		976		3004
3.	<u>Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր</u>	<u>ցուցակված</u>	<u>չցուցակված</u>	<u>ցուցակված</u>	<u>չցուցակված</u>
1)	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի, այդ թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ				
2)	ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ				

	թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ		
3)	Հաշվեգրված տոկոսներ		
4)	Ընդամենը		
4.	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկում (հնարավոր կորուստների պահուստ) (ծանոթագրություն 8)	()	()
5.	Ջուտ ներդրումներ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներում	1523838	1465477

Ընկերությունը <<Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների>> վերադասակարգումներ չի արել: Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ներդրումները հաշվառվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, ամորտիզացված արժեքով:

24. Ծանոթագրություն 20. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում ծանոթագրությունում պետք է բացահայտվեն ներդրումային ընկերության կողմից վերահսկվող անձանց կապիտալում իրականացված ներդրումների շարժը հաշվետու ժամանակաշրջանում՝

	<u>Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների շարժը</u>	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում
1.	Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում	
2.	Ավելացում	
3.	Օտարում (վաճառք)	()
4.	Արժեքի արժեզրկում	()
5.	Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	

	<u>Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներ		
2.	Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներ		
3.	Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներ		
4.	Այլ դուստր ընկերություններում ներդրումներ		
5.	Շահաբաժիններ		
6.	Ընդամենը		

25. Ծանոթագրություն 20-ում պետք է բացահայտվեն այլ անձանց կապիտալում իրականացված ներդրումները՝ առնվազն ըստ հետևյալ չափորոշիչների.

Անձի անվանումը	Հիմնական գործունեությունը	Գրանցման երկիրը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը (հազար դրամ)	Բաժնեմասը %
1.	(օրինակ՝ ինկասացիա, վճարահաշվարկային ծառայություններ, այլ)				
2.					
n.					
Ընդամենը					

26. Ծանոթագրություն 20-ում պետք է բացահայտվեն ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումները:

27. «Ծանոթագրություն 21. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ» ծանոթագրության տարրերն են՝

Հիմնական միջոցներ

	Հողվածի անվանումը	Շենքեր	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխարդա- միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմնական միջոցների գծով կապիտալ ենթակարգեր	Վարձակաձ հիմնական միջոցների գծով կապիտալ ներդրումներ	Ընդամենը
1.	Սկզբնական արժեք							
2.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	19538	4990	3092	-	-	27620
3.	Ավելացում	-	1450	-	-	-	-	1450
4.	Օտարում	()	(1056)	0	0	()	()	(1056)
5.	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
6.	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
7.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	-	19932	4990	3092	-	-	28014
8.	Ավելացում	-	2493	-	-	-	-	2493
9.	Օտարում	()	()	0	()	()	()	()
10.	Վերագնահատում							
11.	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
12.	Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
13.	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	22425	4990	3092	-	-	30507
14.	Կուտակված մաշվածություն							
15.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	19060	3909	812	-	-	23781
16.	Ավելացում	-	1074	998	-	-	-	2072
17.	Օտարում	()	(1056)	0	0	()	()	(1056)
18.	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
19.	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
20.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	-	19078	4907	812	-	-	24797
21.	Ավելացում		1368	83	0			1451
22.	Օտարում	()	0	(-)	()	()	()	0
23.	Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
24.	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-

25.	Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	20446	4990	812	-	-	26248
26.	Զուտ հաշվեկշռային արժեք							
27.	հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	1979	0	2280	-	-	4259
28.	նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	854	83	2280	-	-	3217

Ոչ նյութական ակտիվներ

		Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվների գծով կապիտալ ներդրումներ	Ընդամենը
1.	Սկզբնական արժեք						
2.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	-	399	600	-	999
3.	Ավելացում	-	-	-	-	-	-
4.	Օտարում	()	()	()		()	()
5.	Արժեզրկում	-	-	-	-	-	-
6.	Վերագնահատում	-	-	-	-	-	-
7.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	-	-	399	600	-	999
8.	Ավելացում	-	-	-	-	-	-
9.	Օտարում	()	()	()		()	()
10.	Վերագնահատում	-	-	-	-	-	-
11.	Արժեզրկում	-	-	-	-	-	-
12.	Վերագնահատումից մաշվածության	-	-	-	-	-	-

	ճշգրտում						
13.	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	-	399	600	-	999
14.	Կուտակված մաշվածություն						
15.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	-	399	500	-	899
16.	Ավելացում	-	-	-	60	-	60
17.	Օտարում	()	()	()		()	()
18.	Արժեզրկում	-	-	-		-	-
19.	Վերագնահատում	-	-	-		-	-
